Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՄԵԾԱՆՈՒՆ ԵՐԳՉՈՒՀԻ ԳՈՀԱՐ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(19 մայիսի 2007 թ.)

Մեծարգո Վարչապետ, սիրելի բարեպաշտ ժողովուրդ, սգակիր հարազատներ և մերձավորներ հանգուցյալի.

Տաղանդաշատ երգչուհի, մեր ժողովրդի և Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանավոր զավակ Գոհար Գասպարյանի մահը ցավով է համակել ամենքիս: Խոր վշտով այսօր հրաժեշտ ենք տալիս և վերջին հանգրվան՝ հայ մեծերի Պանթեոն առաջնորդում աշխարհահռչակ մեր մեծ երգչուհուն:

Հայ օպերային երգարվեստը դեպի բարձունքներ առաջնորդած պայծառ ու անկրկնելի մեծություն էր Գոհար Գասպարյանը, որի արվեստը մեր մշակույթի մնայուն արժեքներից է: Իր գեղեցիկ, հզոր ձայնով ու բարձրարվեստ կատարումներով նա ճանաչված էր աշխարհի շատ երկրներում՝ համարում բերելով նաև մեր ժողովրդին: Հայ մշակույթի և հայկական ոգու հարազատ կրողն էր Գոհար Գասպարյանը: Հանրահայտ բազմաթիվ բեմերից նրա կատարմամբ դասական երաժշտության արժեքների հետ նույնպիսի ինքնատիպությամբ, քաղցրաձայն հնչել է նաև հայ երգը, հայ հոգևոր երաժշտությունը՝ գերելով ամենուր ունկնդիրների հոգիները:

Մեծ է հոգելույս Գոհար Գասպարյանի ավանդը նաև երգարվեստի ասպարեզում երիտասարդ սերնդի կրթության գործում: Սիրով ու նվիրումով նա իր փորձառությունն ու գիտելիքները, հայրենասեր ու աստվածասեր իր հոգու լույսը փոխանցել է երիտասարդներին՝ տարիներ շարունակ Երևանի կոնսերվատորիայում կրթելով երաժշտական շնորհներն ու ստեղծագործական կարողությունները իր սաների և առաջնորդելով նրանց դեպի արվեստի մեծ ճանապարհ:

Սիրված ու մեծարված մեծ երգչուհին ու արվեստագետը հայ երգարվեստի ասպարեզում իր երախտարժան վաստակի, մեր Հայրենիքին և Առաքելական Սուրբ Եկեղեցուն մատուցած իր ազնիվ ծառայությանց համար գնահատվել է պետական պարգևներով և մեր Եկեղեցու «Սուրբ Սահակ - Սուրբ Մեսրոպ» պատվո բարձր շքանշանով:

Հանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության և Գերագույն Հոգևոր Խորհրդի Մեր խորին ցավակցությունն ենք բերում լուսահոգի Գոհար Գասպարյանի հարազատներին ու մերձավորներին:

Աղոթում ենք, որ Ողորմած Աստված երկնային երանական բարձունքներում խաղաղության ու լույսերի մեջ ընդունի հոգին Իր ազնվասիրտ աղախնու և մեր ժողովրդի սիրելի զավակի և Սուրբ Հոգու շնորհով մխիթարություն պարգևի հանգուցյալի հարազատներին և սգացյալ բոլոր հոգիներին:

«*Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի. Ամէն*»: